№ 47 Մարտի 17 Հինգշաբթի 1883 Մարտի 17 Հինգշաբթի № 47

ՏԱՍՆԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարվանը 6 ռուբլ։
Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Օտարաքաղաքացիք գիմում են ուղղակի
Тифлисъ. Редакція «Мшакъ»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերից)։

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ

„ՄՇԱԿ"

ԱՄԵՆՕՐԵԱՅ ԼՐԱԳԻՐ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՎԻ ՆԵՐԿԱՅ **1883** ԹՎԻՆ ՆՈՅՆ ԴԻՐՔՈՎ

ԵՒ ՆՈՅՆ ՊՐՕԳՐԱՄԱՅՈՎ

I. ՏԵՐՈՒԹԵԱՆ ԿԱՐԳԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐ։ II. ԱՌԱՋՆՈՐԴՈՂ ՅՕԴՈՒԱԾՆԵՐ։ III. ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Ընդհանուր յօդուածներ, Թղթակցութիւններ, լուրեր։ IV. ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Ընդհանուր յօդուածներ, Թղթակցութիւններ, լուրեր։ V. ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ։ VI. ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։ VII. ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ։ Ֆելիետօն, վէպեր, ինքնուրոյն և թարգմանական յօդուածներ գիտութեան ամեն ճիւղերից, Թղթակցութիւններ։ VIII. ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆ։ Տարեկան 10 ռուբլ, վեց ամսվայ 6 ռուբլ, իւրաքանչիւր ամսվայ 1 ռուբլ։
ՀԱՏՈՎ համարները 5 կոպէկ։
ՀԱՍՑԷՆ։ *Тифлисъ, редакція «Мшакъ»*.

Խմբագիր—Հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Կաթողիկոսական խնդիր։—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Նամակ խմբագրին։ Ներքին լուրեր։—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Արտաքին լուրեր։—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ։—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։—ԲՐՕՍԱ։—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ։ Խաչագողի յիշատակարան։

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԽՆԴԻՐ

—

Մեր անցեալ յօդուածում „Կաթողիկոսական խնդրի" մասին, մենք այն ցանկութիւնն էինք յայտնել, որ Հայոց լուսաւորչական եկեղեցում վերականգնեցրած լինէր այն սկզբունքը, որի վրա և հիմնված էր միշտ լուսաւորչական եկեղեցին, ընտրողական սկզբունքը, որ տալիս էր այդ եկեղեցուն ժողովրդական բնաւորութիւն։ Այդ սկզբունքը թուլացել է վերջին դարերում Հայոց եկեղեցու մէջ, այն ինչ նա առաջ կազմում էր այդ եկեղեցու յատկանիշը։

Եթէ վերջին ժամանակները դանդատներ են լսվում Հայոց ազգի մէջ որ եկեղեցին, որ ազգի մեծամասնութեան հոգևոր և բարոյական կեանքի արտայայտութիւն է, որպէս ազգային, կամ հասարակական-բարոյական կազմակերպութիւն այլ ևս ազգի կօնտրօլին չէ ենթարկվում, այսինքն նրա թէ վարչական, թէ կրօնական-բարոյական, թէ կրթական, թէ վերջապէս դրամական-վարչական գործունէութիւնը ազգի կօնտրօլից, նրա վերահսկողութիւնից դուրս է,—այդ այն պատճառով է որ նոյն եկեղեցին կորցրել է իր առաջվայ ժողովրդական բնաւորութեան մի զգալի մասը։

Ոչ թէ միայն եկեղեցի, բայց և ամեն մի ժողովրդական հաստատութիւն մի որ և է ազգի խիստ, ճիշդ և կանոնաւոր կօնտրօլին ենթարկվելու համար պէտք է անպատճառ հիմնվի երկու գլխաւոր դաղափարների վրա. այդ հաստատութիւնը պէտք է հիմնվի ընտրողական սկզբունքի վրա և նրա պաշտօնեաները պէտք է օրինաւոր և կանոնաւոր կերպով ապահովված լինեն նիւթապէս և ոչ թէ ապրեն պատահական նիւթական միջոցներով։

Մի հաստատութիւն չէ կարող ժողովրդական լինել, մինչև որ նրա պաշտօնեաները ընտրված չը լինեն ժողովրդից. իսկ հաշիւ պահանջել այդ պաշտօնեաներից, կօնտրօլ ունենալ նրանց վրա ազգը կարող է միմիայն այն ժամանակ, երբ իր ընտրած պաշտօնեաներին ապահովացնում է հաստատ ռոճիկներով։

Եթէ ուզում ենք որ Հայոց եկեղեցին, որ իր բնաւորութեամբ ժողովրդական է, ճշմարիտ ժողովրդական լինի, պէտք է վերականգնեցնենք նրա մէջ ընտրողական սկզբունքը։ Բայց այդ բաւական չէ։

Մի հաստատութեան ընտրված պաշտօնեայ, մի ժողովրդական եկեղեցու ընտրված սպասաւորը, լինի նա կաթողիկոս, եպիսկոպոս, թէ ծխական քահանայ, եթէ նրա գոյութիւնը ապահոված չէ հաստատ, որոշ, սահմանված և մարդավայել ապրուստի պիտոյքներին համեմատ ռոճիկով, բայց մի և նոյն ժամանակ նոյն ընտրված պաշտօնեայի կամ եկեղեցու սպասաւորի ձեռքը անհաշիւ տրվում են ահագին ազգային կամ հասարակական գումարներ,—այն ժամանակ ոչինչ հնար, ոչինչ միջոց, ոչինչ իրաւունք չէ լինում նրանից, նոյն ընտրված սպասաւորից հաշիւ ու համար պահանջել։

Հասարակական կօնտրօլը պայմանաւորվում է անպատճառ ընտրողական սկզբունքով, որի հետ անպատճառ պէտք է միացրած լինի ընտրելի անձնաւորութեան նիւթական ապահովութիւնը, ժամանակակից պահանջման համեմատ նրա մարդավայել ապրուստի ապահովութիւնը։

Հայոց լուսաւորչական եկեղեցու հոգևորականութիւնը բաղկացած է երկու որոշ և իրանց բնաւորութեամբ տարբեր դասակարգերից։ Առաջինը կուսակրօն հոգևորականութիւնն է։ Խօ՛ չէ կարելի ընդունել որ մեր կուսակրօնները քրիստոնէութեան առաջին դարերի ճգնաւորներն են, որոնք հեռացել են կեանքից, նրա բոլոր վայելչութիւններից, և ապրում են անապատների մէջ։ Ոչ, նրանք կազմում են եկեղեցու կրօնապետական դասակարգը, կանգնած են եկեղեցու երարխիայի ամենաբարձր աստիճանների վրա, կազմում են եկեղեցու վարչութիւնը, նրա ադմինիստրացիան։ Այդ ադմինիստրացիա, եկեղեցական այդ

ԽԱՉԱԳՈՂԻ

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆԸ

—

Մեր վիճաբանութիւնը քաւոր Պետրոսի հետ տևեց երկար, ես դարձեալ չը կարողացայ համոզել նրան, թէ Նէնէն մեղաւոր չէր մատնութեան գործի մէջ։ Հանգամանքները ինքն ըստ ինքեան այնպէս էին կազմվել, որ Նէնէի կարծիքական վարմունքը հաւանական էին դարձնում։ Այդ անբախտ աղջիկը ընկել էր խաչագողների ձեռքը, նրան չարչարել էին, նա սպառնացել էր, եթէ իրան բաց չը թողնեն, կը մատնէ նրանց. այդ երկիղը առիթ էր տուել խաչագողներին սպանելու նրան. ես ազատեցի նրա կեանքը. և մի քանի օրից յետոյ կատարվեցաւ մատնութիւնը, խաչագողներին կալանաւորեցին։ Այլ ևս ո՞ւմ վրա կարող էին նրանք կասկած ունենալ, եթէ ոչ, կամ իմ, կամ Նէնէի վրա։ Քաւոր Պետրոսը թէև չէր հաւատում, որ ես կը դաւաճանէի նրանց, այսուամենայնիւ, նա ինձ բոլորովին արդար ևս չէր համարում, յայտնելով նոյն միտքը, որ եթէ ես նրա հրամանը կատարած լինէի, և Նէնէին սպանած լինէի, այնուհետև այդ դժբախտութիւնը տեղի չէր ունենայ։ Նրա բարկութեանը չափ չը կար, թէ ինչպէս ես համարձակվեցայ խաբել նրան։ Բայց այդ բարկութիւնը մասամբ մեղմանում էր, երբ նա ի նկատի էր առնում իմ սիրահարութիւնը, որը նրա կարծիքով մինչև խելագարութեան էր հասցրել ինձ։ Բայց նա, որպէս երևում էր, զեռ չը գիտէր օրս հետ իմ հանդիպելը, եթէ յայտնէի, գուցէ բոլորովին կը փարատէի թէ նրա և թէ ընկերներիս կասկածը իմ անհաւատարմութեան մասին։ Քաւոր Պետրոսը ներող էր, երբ իրաւացի փաստեր էին ներկայացնում։ Բայց ես այլ ևս փոյթ չունէի իմ անձը արդարացնելու նրա առջև։ Նա հեռացաւ, հետևեալ խօսքերը ասելով.

—Օրէնքի դատապարտութիւնից աւելի հեշտ է ազատել քեզ, բայց ես չը գիտեմ, ինչպէս դու պիտի ազատվես քո ընկերների վրէժխնդրութիւնից...

Այդ խօսքերը սարսափելի էին. սարսափելի էին աւելի այն պատճառով, որ դուրս էին գալիս մի խաչագողի բերանից։ Բայց ես լսեցի խորին արհամարհանքով, և այդ աւելի վիրաւորեց նրան։ Այդ անգութ մարդը զեռ սիրում էր ինձ, թէև թագցնում էր իր սէրը,—զեռ մտածում էր իմ մասին, զեռ հոգ էր տանում իմ վրա։ Ես տեսայ, թէ ինչպէս նա վշտացած կերպով հեռացաւ, զընաց նստեց բանտի մի մթին անկիւնում, և գլուխը քարշ գցած, տխուր մտածութիւնների մէջ ընկաւ։ Մթթէ նա զգում էր, որ ես նրա դատապարտութեան թշուառ զոհն էի...

Երբէք չէր պատահել, որ ես այնպիսի համարձակութեամբ խօսէի քաւոր Պետրոսի հետ, որպէս այն գիշեր։ Կարծես թէ, յանցաւորի կապանքները մի տեսակ ազատութիւն են շնորհում նրան։ Շղթաների մէջ թէ մնծաւորը և թէ ստորադրեալը հաւասար իրաւունք են վայելում։ Մեր վիճաբանութիւնը թէև խիստ տաք էր, բայց անցաւ հանդարտ կերպով, այնպէս որ, մեր միւս ընկերները, որոնք զբաղված էին թղթախաղով, ոչինչ չը լսեցին։ Այժմ նրանք վերջացրել էին իրանց խաղը և սկսել էին միմեանց հետ զանազան հանաքներ անել։ Ինձ վրա ուշադրութիւն անգամ չէին դարձնում։ Ես խորին զղջանքով լսում էի նրանց զուարճախօսութիւնները։

—Էդուց կը սկսվի մեր հարսանիքը, ասում էր մէկը, յիշեցնելով քննութեան սկսվելը։

—Տօ, Ցարօ, այդ քանիերրորդ անգամն է, որ ոտներիդ հագնում ես այդ զանգալակները, հարցնում էր մի մանկահասակ խաչագող ծերունի ընկերից, ցոյց տալով նրա շղթաները։

—Յատանան գիտէ, մոռացել եմ հաշիւը, պատասխանում էր ծերունին ինքնաբաւական ժպիտով։

—Դու նրանից այդ հարցրու, թէ քանի անգամ փախել ես «կարմիր տնից», մէջ մտաւ մի կարճահասակ խաչագող։

«Կարմիր տուն» կոչում էին նրանք Սիբիրը։

—Այդ հարցնելու հարկ չը կայ, պատասխանեց առաջինը.—չես տեսնում, հաշիւը ճակատի վրա գրած է. երկու դրոշմ, կը նշանակէ երկու անգամ։

—Այս անգամ երրորդ դրոշմը կը դրվի, պատասխանեց ծերունի Ցարօն, շարունակելով իր ժպիտը.—երեք դրոշմ, վատ չէ, խորհրդաւոր թիւ է։

Այդ ժամանակ զեռ գործադրվում էր այն օրէնքը, որ աքսորականների ճակատի վրա դրոշմ էին դնում։

—Ապա դու ինչպէս փախար բերդից, հարցրեց մէկը իր ընկերից, որին կոչում էին Զաքօ։

—Այդ ինչ մի զարմանալու բան է, պատասխանեց Զաքօն,—շատ հեշտ կերպով։ Ինձ դրեցին բերդը։ Ընկերս, որ աւելի յանցաւոր էր քան թէ ես, չը բռնվեցաւ։ Նա իր հագուստն ու կերպարանքը փոխեց, և իրան ձևացնելով իմ ազգական, թոյլ տուած օրերում գալիս էր ինձ տեսութիւն։ Ամեն անգամ բերում էր իմ համար սպիտակ հաց և այլ ուտելիքներ։ Վերջապէս հասաւ զատկի տօնը։ Այդ տօնը և կալանաւորների վրա թափում է իր ողորմութիւնը։ Բարեպաշտ մարդիկ իրանց տան պատրաստութիւնից նրանց համար բաժին են ուղարկում։ Այդ տօնին չը մոռացվեցայ և ես։ Ընկերս բերեց ինձ համար մի ամբողջ հաց և սառը փլաւ։ Այդ երկրի հացերը, փառք Աստծոյ, մեր բարակ և թափանցիկ լաւաշները չեն. նրանք այնքան ահագին են, որ ամեն բան կարելի է նրանց մէջ թագցնել։ Հացի մէջ դրած էր փոքրիկ սղոց և արբեշումի երկայն պարան։ Առաջինը բաւական էր բանտի լուսամուտներից մէկի երկաթեայ վանդակապետը կտրելու, իսկ երկրորդով այնտեղից ցած իջնելու։

—Իսկ պահապանները չը նկատեցին։

—Զատկի տօնին մթթէ կարելի է մի պահապան գտնել, որ հարբած չը լինի։

Այս տեսակ խօսակցութիւններ տեսեցին մինչև կէս գիշեր։ Ես այլ ևս լսել չը կարողացայ։ Մի կողմից յոգնածութիւնը, միւս կողմից հոգեկան տանջանքը այն աստիճան թուլացրել էին ինձ, որ երկար արթուն մնալ չը կարողացայ։

Է.

ՆԱ ԻՆՉ ՉԸ ԹՈՂԵՑ

Անցել էր աւելի քան մի տարի այն օրից, որ ես կալանաւորվեցայ, որ ես բանտում մաշվում էի։

Հէնց առաջին անգամ, երբ տարվեցայ քննիչի մօտ, ես պարզ կերպով խոստովանվեցայ բոլորը, ինչ որ գործել էի։ Ես ոչինչ չը թագցրի, ես մինչև անգամ ցոյց տուի այն բաները, որ ինձանից չէին հարցնում։ Ես մի ըստ միտքէ պատմեցի, թէ ինչպէս անմեղ սրտով դուրս եկայ հայրենիքից, ինչպէս ընկայ խաչագողների հասարակութեան մէջ, ինչպէս հետզհետէ ընտելացայ չարագործութեան, ինչեր արեցի, ինչեր կատարեցի, և վերջապէս որպէս հօրս խրատով բաժանվեցայ այդ հասարակութիւնից, և պատրաստվում էի բոլորովին հեռանալ նրանցից, բայց յանկարծ բռնվեցայ։

Ամեն ինչ անկեղծաբար պատմելուց յետոյ, ես յոյս ունէի, որ կարդարացնեն ինձ, տեսնելով, որ ես բոլորովին անգիտակցաբար ընկած էի այդ յանցանքների մէջ, և ի նկատի առնելով, որ ես արդէն զղջացել էի իմ մեղքերը, հասկացել էի իմ մոլորութիւնները և դարձել էի չար ճանապարհից։

Բայց այնպէս չեղաւ, ինչպէս ես սպասում էի։

վարչութիւնը կազմող անձինքներից, կախված է կառավարել ազգի ամբողջ հոգևոր-բարոյական գոյութիւնը, կառավարել նրա կենտրոնական ընդհանուր հայոց եկեղեցական գործերը, կառավարել թեմերը, ձեռնադրել եպիսկոպոսներ, այսինքն սրբացնել ժողովրդի իր միջից ընտրված արժանաւոր հովիւներ, ձեռնադրել ծխական հովիւներ, ժողովրդի քարոզիչներ, նրա բարոյականութեան ուսուցիչներ, կառավարել հոգևոր-ազգային դպրոցներ, հաւաքել ազգի տուրքերը և կարգադրել ազգային ահագին գումարները յօգուտ նոյն ազգի, կառավարել ազգային-եկեղեցական կալուածներ... Վերջապէս դա մի ամբողջ և շատ բաղադրեալ մի ադմինիստրացիա է,—և այդ ադմինիստրացիայի ներկայացուցիչները, որոնք ունեն իրանց ձեռքում ահագին ոյժ և ահագին գումարներ, դադարել են ընտրված լինել ժողովրդից և ապահոված չեն հաստատ և սահմանված ռոճիկներով:

Եւ այդ դրութեան մէջ, երբ ազգի այդ հոգևոր ադմինիստրացիայի ներկայացուցիչները համ չեն ընտրվում կառավարվածներից, համ չեն ապահոված հաստատ ռոճիկով, ուրիշ կողմից իրանց ձեռքում ունեն ահագին նիւթական միջոցներ, որ նոյն իսկ ժողովրդից են ստանում,—այլ ևս ի՞նչ կօնտրոլ հնարաւոր է նրանց վրա:

Եթէ մենք ընդունում ենք որ մեր կուսակրօնները ճգնաւորներ չեն միայն, այլ կազմում են ազգային և ժողովրդական եկեղեցու վարչութիւնը,—նրանք պէտք է լինեն պատասխանատու իրանց ընտրողներին, ժողովրդին: Իսկ դրան կարելի է հասնել վերականգնեցնելով ժողովրդական եկեղեցու գլխաւոր սկզբունքը՝ ընտրողականութիւնը: Իսկ այդ ընտրողական սկզբունքը գործնական կը լինի միայն այն ժամանակ, երբ նրա հետ միացրած կը լինի ընտրվածի նիւթական ապահովութեան չափն ու սահմանը:

Երկրորդ դասակարգը եկեղեցու մէջ կազմում են քահանաները, պսակված հոգևորականները: Նրանք իրանց դիրքով եկեղեցական վարչութիւն չեն կազմում, եկեղեցական ադմինիստրացիա չեն, այլ ժողովրդի հովիւներ են, նրա քարոզիչներ են, նրա դաւակների դաստիարակներ են, նրա դպրոցների դասատուներ են: Նրանք ժողովրդի մէջ ապրելով, ապրում են ժողովրդի կեանքով, վայելում են ընտանեկան կեանք, մեղ պէս, հասարակ, աշխարհական քաղաքացիների պէս, քաղաքացիներ են: Նրանց համար փակված է մինչև անգամ ճանապարհ դէպի եկեղեցական վարչական աստիճանները: Քահանան չէ կարող դառնալ ոչ եպիսկոպոս, ոչ էլ կաթողիկոս:

Քահանան, ուրեմն, իր հասարակական դիրքով, նոյն քաղաքացի է: Պարզ է որ մի կողմից ժողովուրդը իրաւունք ունի ինքն իր համար, իր կամքով ընտրել արժանաւոր հովիւ, արժանաւոր քարոզիչ, արժանաւոր քահանայ, ինչպէս նա իր համար ընտրում է կամ հրաւիրում է ուսուցիչ, տեսուչ: Իսկ միւս կողմից պարզ է որ ընտրված ժողովրդական հոգևորականը, քահանան, ապրելով քաղաքացու կեանքով, ընտանեկան կեանքով, պսակված լինելով, բնականապէս և երեխաներ ունենալ կարողանալով,—իրաւունք ունի ցանկանալ իր անձը և իր ընտանիքը նիւթապէս ապահոված տեսնել և ոչ թէ ապրել պատահական միջոցներով, շատ անգամ բեռնաւորված լինելով բազմաթիւ ընտանիքով:

Ասացէք խնդրեմ, ցանկալի չէ՞ և ժողովրդական կօնտրոլը քահանայի վրա. ցանկալի չէ՞ որ նա էլ ծուխին հաշիւ ու համար տայ եկեղեցական գումարների մասին: Բայց կարելի է արդեօք այդ պահանջել նրանից, կարելի է արդեօք զարմանալ որ քահանան որ և է զեղծումների է դիմում, երբ նա մուրացկան է: Ի՞նչ կօնտրոլ հնարաւոր է և ի՞նչ կօնտրոլի իրաւունք ունի ժողովուրդը:

Ո՞ւր է ճնացել, ուրեմն ժողովրդական սկզբունքը թէ աբեղաների և թէ քահանաների վերաբերութեամբ:

Մեր հոգևորականութիւնը տգէտ է, գանգատներ են լսվում ամեն կողմից: Ուրեմն ցանկալի է ունենալ լուսաւորված հոգևորականութիւն, պէտք է հարցնենք մենք:

Այո՛, ցանկալի է, պատասխանում են մեզ, և դրա համար մենք հիմնում ենք դպրոցներ, հիմնել ենք և ճեմարան:

Բայց այդ դպրոցներից, այդ ճեմարանից դուրս եկողները, ինչպէս և համալսարաններից դուրս եկողները դարձեալ երբէք չեն կազմի հոգևորական դասակարգի, ոչ աբեղաների, ոչ էլ քահանաների կօնտինդէնտը, նրանք ուսում կաւարտեն և կը դառնան աշխարհական:

Ընտրողական սկզբունքի վրա հիմնված չը լինելով, այլ կախված լինելով երաբխիայի կամայականութիւնից, նիւթական հաստատ ապահովութիւնից զուրկ և կօնտրոլից, հասարակական վերահսկողութիւնից ազատ լինելով (մի զօրեղ հանգամանք որ և մղում է հոգևորականներին դէպի ամեն տեսակ զեղծումներ), հոգևորական կոչումը, թէ աբեղայի (վարչական) և թէ քահանայի (քարոզչի) երբէք դրաւիչ չեն լինի ճշմարիտ լուսաւորված, կրթված, ուսումնական անձնաւորութիւնների համար, իսկ այդ կոչումը դարձեալ կընդունեն աւելի տգէտները և այնպիսի անձինք, որոնք կարող են կամ դիտեն հաշվել նիւթապէս անապահով դրութեան, այլ և այլ կողմնակի միջոցներով ապահովվելու ստիպողական անհրաժեշտութեան հետ:

Եթէ հոգևորականութիւնը լինէր այն, ինչ որ մենք ենք նկարագրել, եթէ նա լինէր այն, ինչ որ պէտք է լինէր,—այնուհետև նա կարող էր բարերար ազդեցութիւն ունենալ և ազգի կրթական կողմի վրա:

Ի՞նչպէս պէտք է վերաբերվի հոգևորականութիւնը դէպի կրթական կողմը, դէպի դպրոցը, դէպի քարոզչութիւնը,—այդ մասին մի այլ անգամ:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

—

Թիֆլիս, 15-ին մարտի

Եղբ. Սալի-Օղլու ծխախոտի գործակատարների մէկը, Ց. Ն. անունով, որ մօտ երեք տարի ծառայում էր այնտեղ և բաւականի վարկ և հանրում վայելում, վերջերումս անպէտք քաղելով իրան ընծայված հաւատից, զանազան ժամանակներում գործարանի պատասխանատու արտադրութեանց պահեստից, որ կառավարում էր ինքը, յափշտակում է մօտ 1,000 ռուբլու թամբաքու և պապիրոսներ, իսկ իր խարդախութիւնը ծածկելու համար նա ճարպիկութեամբ դարսում է թամբաքուների կարգերը, այնպէս որ հաշուառութեան ժամանակը անկասելի է մնում խարդախութիւնը: Բայց պարոնը տեսնելով որ ոչ ուշ ապրում իր խարդախութիւնը յերևան պիտի գայ, մանաւանդ որ գնողները ամենայն կողմից սկսել էին դանդաղել, որ իրանց համար դարսված արկղներում ապրանք միշտ պակաս է դուրս գալիս, փետրվար ամսի 10-ին իրիկնապահին, երբ գործարանատէրերը բացակայ են լինում գործարանից և մէկ գնողից 250 ռուբլի կանխիկ փող առած լինում, յարմար միջոց է համարում ապրեցնելու. մանաւանդ որ ճանապարհածախսն էլ ձեռին է, ուստի նա սովորականից քանի ժամ առաջ թողնում է պահեստը բաց, զանազան տուփերելով պահեստում գտնվող, իբրև իր օրինական ապրանքները արկղներում դարսելու ժամանակ տղային, պահեստի դուռները կողպել և բանալիները յանձնել տիրոջը, իսկ ինքը գնում, պատճառելով որ անձնական գործ ունի, ուստի և ստիպված է փոքր ինչ վաղ գնալ:

Ցեսարայ առաւօտին պարոնը այլ ևս չէ երևում և հարց ու փորձից երևում է, որ նա նոյնիսկ իր բնակարանից ևս դուրս է գնացած. փոքր ինչ կասկածանաց տեղիք է տալիս, իսկ յետոյ նրա մի անստորագիր գրութիւնը, որը գրված էր հաշուապահին արդէն կասկածն իրականութեան է փոխում: Յայտարարվում է պոլիցիայի կարգադրութեամբ 5-րդ օրը կալանավորվում են նրան Փոթիի մէջ և բերում այստեղ: Այժմ նա քրէական յանցանքի է մատնված և ժամանակաւորապէս բանտարկված է, մինչև գործի վերջնական քննութիւնը:

Այս դէպքը ոչ սակաւ ազդեցութիւն ունեցաւ Թիֆլիսի գործակատարների վիճակի վրա. ամենը սկսեց նախազգուշական միջոցներ գործադրել իմ անկեղծ խոստովանութիւնը աւելի ծանրացրեց իմ վրա իմ մեղքերը: Ես ինքս ինձ համար վկայ դարձայ և հաստատեցի իմ յանցանքները: Իմ ազատման վրա ուշադրութիւն չը դարձրին, մատնեցին միայն ապաշխարութեան մասին:

Մի քանի ամսից յետոյ, քաղաքի բարձր դատարանում, կարդացին իմ դատապարտութեան վճիռը. «Զրկել ամեն իրաւունքներից, աքսորել մինչև մահ տաժանական աշխատութիւնների մէջ»...

Ես շատ տխրեցայ, երբ լսեցի այդ վճիռը. չը ներել յանցաւորին, որ արդէն զղջացել էր, որ արդէն ուղղվել էր: Բայց ով է քննում մարդու սիրտը. նա այնպիսի մի խորութեան մէջ թաղված է, որ ամենասրատես դատաւորի աչքն անգամ այնտեղ թափանցել կարող չէ:

Իմ ընկերները նոյնպէս աքսորանքի դատապարտվեցան, բայց նրանք այնպէս տխուր չէին, որպէս ես. նրանք աւելի զայրացած էին երևում, քան թէ տրտում:

Շրջապատած զինուորներով, դատարանից կըրկին տարան ինձ բանտը: Երբ հասցրին բերդի դռանը, դեռ ներս չը մտած, իմ եռևից մի ճիչ, մի ցաւալի աղաղակ բարձրացաւ. «Ես պէտք է տեսնեմ նրան... մինթէ դուք գութ չունէք... մինթէ դուք Աստուած չունէք... մարդիկ, ինչու էք արգելում ինձ... ես պէտք է տեսնեմ նրան... թողէք, որ տեսնեմ նրան»...

Ես յետ նայեցայ: Այդ խօսքերը լսվում էին մի աղջկայ բերնից, որ պատառոտած հագուստով, հերարձակ, այս կողմ և այն կողմ էր ընկնում, աշխատում էր պատառել զինուորների շարքը և մօտենալ ինձ: Պահապանները հրացանների սուինների հետ հեռացնում էին նրան, բայց նա դարձեալ առաջ էր մղվում:

Ողբան և խռովութեան մէջ լինէի այն րոպէում, ողբան և իմ զլուխը և խելքը ինձ չէին պատկանում, այսուամենայնիւ, այն արտաշարժ պատկերի մէջ ես ճանաչեցի Նէնէին: Խեղճ աղջիկ, որտեղից յայտնվեցաւ նա...

Նրա աղաղակից զուրս եկաւ բանտապահը:

—Դարձեալ այն ցնորված աղջիկն է, ասաց նա և հրամայեց հեռացնել:

Երևում էր, որ Նէնէն առաջին անգամը չէր, որ խնդրում էր՝ իրան թոյլ տան բանտը մտնելու: Նրան արդէն ճանաչում էին: Նա խիստ ողորմելի ձայնով պատասխանեց.

—Պարոն բանտապահ, ես ցնորված չեմ... ի սէր Աստուծոյ, դիմացէք իմ վրա, թոյլ տուեցէք, որ տեսնեմ նրան...

—Ո՞ւմ տեսնես:

—Այն կալանաւորին, որ տանում են...

—Դու ով ես:

—Ես նրա բարեկամն եմ... թողէք տեսնեմ նրան... մինթէ դուք Աստուած չունէք... եթէ չը թողնէք, ես դատաւորի մօտ կը գնամ... թագաւորի մօտ կը գնամ...

—Աւելի լաւ կը լինի, եթէ դժատունը գնաս, հեղնութեամբ պատասխանեց բանտապահը և հրամայեց հեռացնել:

Նրա անդիմութիւնը աւելի վշտացրեց ինձ, քան իմ դատապարտութեան վճիռը, որ այնօր կարդացին դատարանում: Ինձ ներս տարան, դռները փակվեցան իմ եռևից, ես այլ ևս ոչինչ չը լսեցի...

Ամբողջ օրը խելագարի նման էի: Ես բոլորովին մոռացել էի իմ թշուառ դրութիւնը, մոռացել էի, թէ որպիսի սարսափելի ապագայ էր սպասում ինձ,—ես միայն մտածում էի անբախտ Նէնէի մասին: Միշտ իմ աչքերի առջևն էր այն վրդովմունքով լի աղջիկը, տեսնում էի այն հերարձակ կոյսի վշտալի պատկերը, լսում էի նրա սգաւոր ձայնը... Արևը մտաւ, մութը պատեց, բանտի մէջ տիրում էր գիշերային խաւարը: Այդ մթութեան մէջ դարձեալ տեսնում էի նրան, լսում էի նրա ձայնը...

Առաջին անգամ ես զղացի չղթաների ծանրութիւնը, առաջին անգամ բանտը ներկայացաւ ինձ իր սոսկալի կերպարանքով: Մինչև այնօր ինձ տանելի էր բոլորը: Իսկ երբ տեսայ, թէ իմ պատճառով տանջվում է մի անմեղ հոգի, այն ժամանակ միայն հասկանալի եղաւ բոլոր զարհուրանքը իմ թշուառ դրութեան...

Ամենքը թողեցին ինձ. իմ հաւատարիմ ընկերները ինձ մատնեցին. ես կորցրեցայ լոյս աշխարհից... բայց նա ինձ չը թողեց... Նա եկաւ իմ ետևից. նա որոնում էր ինձ, երևի, երկար որոնում էր, և գտաւ: Բայց գտաւ բանտի մէջ, դատապարտեալների մռայլ գերեզմանի մէջ...

Այդ գերեզմանի շուրջը պտտվում էր նա, գիշերային մենաւոր ուրուականի պէս պտտվում էր նա, և խաւարի միջից մի մարդարէուհի մոռեղանարցուկի նման կամենում էր զուրս կոչել իր սիրելիին...

Դա իրողութիւն էր, դա ցնորք չէր, ես լսում էի նրա ձայնը, նոյն սրտաշարժ, ողբալի ձայնը, որպէս լսել էի ցերեկով: Գիշերը խաղաղ էր. մարդիկ քնած էին. դրսում ամեն ինչ գտնվում էր խորին լռութեան մէջ: «Թողէք, տեսնեմ նրան»... այդ խօսքերը միայն հնչվում էին գիշերային լռութեան մէջ...

Բանտի պահապան զինուորը, հրացանը ուսին դրած, չափաւոր քայլերով անցուդարձ էր անում իր պահականոցի մօտ: Նա նոյնպէս լսում էր ողբալի ձայնը, և անհետաքրքրութեամբ ասում էր. «դա այն ցնորված աղջկայ ձայնն է»...

Գիշերը ես անցուցի տենդային անհանգստութեան մէջ. ոչ քնած էի և ոչ արթուն: Առաւօտեան, երբ արեգակի առաջին ճառագայթները ներս ցոլացին բանտի նեղ լուսամուտներից, և ինձ համար ծագեց ուրախութեան լոյսը: Դուռը բացվեցաւ, խելագարի նման ներս վազեց Նէնէն. Նրա առաջին խօսքերը կցկտուր էին և անհասկանալի: Նա մօտեցաւ, գրկեց ինձ, և երկու մեծաց իմ կուրծքի վրա անխօս: Նա նման էր սպանվածի, որի երեսի վրա բնաւ զոյն չը կայ. Կենդանի մնացել էին դեռ չը մարած աչքերը միայն, այն լի կատաղութեամբ աչքերը, որոնք իրանց խռովութեան մէջ ես զեղեցիկ էին:

Նրա խռովութիւնը չատով անցաւ, անցաւ, որովհետև գտնվում էր ինձ մօտ, որովհետև մոտենում էր ինձ: Նա սկսեց խօսել.

—Ա՛խ, սիրելիս, եթէ գիտենայիր ոնքան որոնել եմ քեզ... ոնքան ման եմ եկել...

Նրա ձայնը սկսվեց խեղդվել. փոքր ինչ հանգստացաւ և ապա շարունակեց.

—Անցնում էի քաղաքից քաղաք, գիւղից գիւղ, ամեն տեղ հարցնում էի քեզ... Ա՛խ, ինչու մարդիկ այսքան վատացել են... ամեն տեղ հալածում էին ինձ... ամեն տեղ հեռացնում էին ինձ... չէին թողնում, որ բնակարանների մէջ մտնեմ... ասում էին՝ դա ցնորված աղջիկ է...

—Ապա որտեղ էիր անցկացնում գիշերը:

—Փողոցների վրա, բայց երկնքի տակ... և ամենի հանգիստ էի, երբ գտնվում էի անապատում կամ թաղվում էի անտառների ծառերի մէջ... Այնտեղ լաւ էր, այնտեղ մարդիկ չը կային...

—Ապա ինչով էիր կերակրվում դու:

—Շատ անգամ օրերով քաղցած էի մնում... շատ անգամ ուտում էի դաշտային բանջարներ կամ կերակրվում էի վայրենի պտուղներով... երբեմն գտնվում էին բարի մարդիկ, որոնք ինձ հաց էին տալիս:

Եւ այդ բոլորը ո՞ւմ համար, ինչի համար,—մի դատապարտեալ աքսորականի համար, որ պիտի մաշվեր, պիտի ոչնչանար հանքերում...

(Կը շարունակվի)

իր գործակատարի դէմ։—Խեղճ պրիկաշչիկներ, որքան կարողանում էք չարչարվեցէք «ցանաք հացով եօլայ գնացէք», ջանք արէք անուն, վարկ և պատիւ վաստակելու, և մի մարդու անարգելու վարմունքը բաւական է րոպէի մէջ ձեր տարիների արդիւնքով ձեռք բերած հաւատարմութիւնը կործանելի ենթարկել։

Յովհաննէս Ս. Ստեփանեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՕԼԻՑ ստացանք 18 ստորագրութիւններով մի համակրական նամակ, որի մէջ յայտնվում է շնորհակալութիւն «Մշակ» լրագրին և մեր աշխատակից պ. Բաֆֆիին։

—

Թիւրքաց Հայաստանի Էրզրում քաղաքից ստացած մանաւոր նամակից քաղում ենք հետեւեալ տեղեկութիւնները։ «Կարին քաղաքը կատարելապէս այլակերպվեցաւ։ Թիւրքերի խստութիւնները օրից օր շատանում են։ Անկարգութիւնները մեծ են։ Կալանաւորներին դեռ չեն ազատել բանտից։ Ձերբակալների անցքից մի ամիս յետոյ մի թիւրք երիտասարդ զզուելով իր հօր բռնաւորութիւնից, գիշեր ժամանակ մտրթում է դաշոյնով իր հօրը։ Սրա արիւնի գլուխը անմեղ հայերից էին ուզում առնել, հաւատացած լինելով, որ նրանք են սպանել արիւնարբու թիւրքին, որ վաղուց է արդէն յայտնի էր իր չարագործութիւններով և առելութեամբ դէպի հայերը։ Նա հարիւրաւոր քրիստոնեաների արիւն է վիթել, նոյն իսկ Էրզրումի մէջ երեք հայի գլխատել է տուել։ Կառավարութիւնը ուզում էր մեղադրել հայերին այդ թիւրքի սպանման մէջ, բայց սպանվածի որդին դատարանում խոստովանվեց թէ ինքն է մորթել իր հօրը։ Բացի ձերբակալված հայերից 78 հոգի էլ կառավարութեան խստութիւններից փախչելով, այժմ թաց են կենում և ապրում են անայտ տեղերում։ Փախստականները պատկանելով արհեստաւորների դասակարգին, նրանց ընտանիքները վերջին ծայր աղքատութեան մէջ են մնացել Էրզրումի մէջ, նրանք ուտելու հաց չունեն, զրկված լինելով իրանց կերակրողներից։ Նրանց խանութները փակված են։ Հայոց և յունաց երեւելիներից 15 ոսկի հասաւ բանտարկեալների ընտանիքներին հացագին վճարելու համար։ Անցաւ չորս ու կէս ամիս, և բանտարկեալները դեռ ևս տառապում են բանտի խոշչերում։ Բանտի խոնաւ և ցուրտ օդը իր ներգործութեամբ մահաբեր վտանգ է սպառնում նրանց։ Նրանցից մի քանիսներ արդէն արիւն են թքում, ոմանք փոխադրվեցան հիւանդանոց, որ նոյնպէս բանտի մէջ է գտնվում։»

—

Մարտի 13-ից ՄԵԾ-ԳԱՐԱԲԼԻՍԱՅԻՑ մեզ գրում են։ «Ձեր ընթերցողներին յայտնի է արդէն այն անբաւականութիւնը, որ մեր գիւղացիները ունեցան տեղիս անտառապետի հետ «պալիաններ» կոչված հասարակապատկան հողերի մասին, որի պատճառով բողոքող գիւղացիներից մի քանիսներ, ինչպէս շատ անգամ յիշված էր «Մշակի» մէջ, Ալէքսանդրապօլի բանտում էին նստած։ Անտառապետի հարցի մէջ «Մշակը» իր առաջնորդող յօդուածներով և ձեր լրագրի թղթակիցները շատ նպաստեցին ճշմարտութիւնը վերականգնեցնելու, որի համար գիւղը ձեզ շնորհակալութիւն է յայտնում։ Այժմ անտառապետի հետ վէճը, երկար ձգձգվելուց յետոյ, վերջապէս երէկ հեռագիր ստացվեցաւ Երեւանից, որ Երեւանի նահանգական դատարանը վճռեց հարցը յօգուտ գիւղացիների և «պալիաններ» կոչված հողերը յատկացվեցան գիւղացիներին, որ մինչև այժմ անտառապետը կառավարութեան սեփականութիւն էր համարում։ Այդ վճիռը շատ նշանաւոր է մեզ համար, աչքի առաջ ունենալով գիւղացիների հողային հարցը և հողի պակասութիւնը թէ մեր և թէ ուրիշ գիւղերում։ Ղարաքլիսեցիները մեծ ուրախութեան մէջ են։»

—

Որովհետև լուր է տարածվել որ վրացի գեներալ իշխան Գրիգոր Օրբելեանի վտանգաւոր կերպով հիւանդ է և որովհետև Թիֆլիսի հասարակութիւնը, թէ վրացիք, թէ հայերը և թէ ռուսները հետաքրքրվում են այդ անձի առողջութեամբ, որ համ վարչական մեծ նշանակութիւն ունէր Կովկասում, համ էլ յայտնի է, որպէս վրաց նշանաւոր բանաստեղծ, այդ պատճառով հիւանդին բժշկող դոկտոր Գասպարեանց այնքան բարի եղաւ հասցնելու մեր խմբագրութեանը հետեւեալ տեղեկութիւնը իշխանի հիւանդութեան ընթացքի մասին։ Մարտի 16-ին լրացաւ 34-որդ օր հիւանդութեան. ջերմութիւնը .38,9 աստիճան է, պուլսը 100։ Հիւանդը ունի որովայնի ալիք, ուտում է բաւականացուցիչ կերպով և իսկապէս հիւանդութիւնը բացի իշխանի խոր ծերութեան պատճառով, վտանգ չէ ներկայացնում։ Հիւանդը պաշտօնացուցչին համեմատ այժմ 83 տարեկան է։ Այժմ հիւանդին բժշկում են երկու բժշկներ. դոկտոր Գասպարեանց և դոկտոր Ցիխօմիրով։

—

Կովկասեան հայոց «Բարեգործական ընկերութեան» խորհուրդը խնդրում է մեզ զետեղել «Մշակի» մէջ հետեւեալ յայտարարութիւնը։ «Հայոց Բարեգործական ընկերութեան խորհուրդը խորին շնորհակալութեամբ ստացաւ սոյն մարտի 12-ին, ընկերութեանս նուէր, 300 ռուբլի, մոսկվայաբնակ մեծապատիւ Գէորգ Մարտինիչ Լիանոզեանից։ Կանոնագրութեան 10-որդ յօդուածին համաձայն, մեծապատիւ նուիրատուն ճանաչվում է մշտական անդամ Հայոց Բարեգործական ընկերութեան Կովկասում»։

—

Լսում ենք որ անցեալ 1882 թվին Մանկունի եպիսկոպոսը փոխադրել է Կ. Պոլիս պ. Յովհաննէսի Թիֆլիսի առեւտրական տան միջնորդութեամբ 160 հազար ռուբլի։ Հետաքրքիր կը լինի իմանալ պ. Յովհաննէսից որ աստիճան ճիշդ է այդ տեղեկութիւնը։

—

Դոկտոր Աւետիս Արասխանեանց խնդրում է մեզ յայտնել, որ իր վեցերորդ դասախօսութիւնը նա կարդալու է Արծրունու թատրոնում կիրակի օր, մարտի 20-ին, առաւօտեան ժամը 12-ին։ Տոմսակները կարելի է առնել Արծրունու թատրոնի կասսայում։

—

Երկուշաբթի, 21-ին մարտի, երեկոյեան 8 ժամին, ռուս նշանաւոր երգչուհի, տիկին Մէնշիկովա տալու է մի կոնցերտ Արծրունու թատրոնում, մասնակցութեամբ պ. պ. Միխայլովի և Լավրովի։ Տոմսակներ կարելի է ստանալ Արծրունու թատրոնի կասսայում։

—

Այս օրերս Վիէննայից վերադարձաւ ԹԻՖԼԻՍ հայոց աւերակների լուսանկար պ. Քիւրքճեան։ Լսում ենք որ նա դարձեալ դիտաւորութիւն ունի ուղեւորվել դէպի հին Հայաստան, հայոց այլ և այլ հին աւերակները լուսանկարելու դիտաւորութեամբ։ Այժմ նրանք որոնք ցանկանում են պ. Քիւրքճեանի Անիի աւերակների ֆոտոգրաֆիական ժողովածու ստանալ, կարող են Թիֆլիս դիմել նամակով, կամ նրան, կամ «Մշակի» խմբագրութեանը։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Անգլիական լրագիրները հաղորդում են մանրամասներ մարտի 3-ին Լոնդոնի մէջ եղած ճայթիւնի մասին։ Այդ տեղեկութիւններից երեւում է, որ թէ պարլամենտը և թէ մօտակայ տները սարսափելի վտանգի էին ենթարկված։ Ճայթիւնը կատարվեց կառավարչական մի անգին շինութեան մէջ, որտեղ տեղաւորված էին ներքին, արտաքին և հեղկական գործերի մինիստրութիւնները։ Այդ շինութեանը կից գտնվում է Գլադստոնի պաշտօնական բնակարանը, որը այդ օրը մրսելու պատճառով իր սենեակից չէր դուրս եկել։ Պարլամենտը նոյնպէս մօտիկ է գտնվում։ Նոյն րոպէին երբ պարլամենտական հսկայական ժամացոյցը խփեց 9 ժամը, սարսափելի աղմուկ բարձրացաւ, կարծես թէ միաժամանակ մի քանի թնդանօթներ արձակեցին։ Դեռնը շարժվեցաւ։ Բոլոր դէպի երկինք բարձրացաւ և միաժամանակ թէ մօտակայ տների և թէ փողոցների լապտերների գաղը հանգաւ։ Այդ շինութեան դիմացը գտնվում է պօլիցիականի տնակը։ Հերթապահ պօլիցիականին օդի ճնշումը տնակից դուրս գցեց, իսկ տնակը քանդվեցաւ։ Մի կնոջ և երկու երեխաների հանեցին աւերակների տակից, բայց առանց առանձին վնասների։ Այդ ժամանակ համայնքների ժողովի մէջ նիստ կար։ Պատգամաւորներից մէկը նոր էր սկսել ճառը, երբ սարսափելի ցնցումն զգաց։ Բոլոր պատգամաւորները դուրս վազեցին դահլիճից և ուղեւորվեցին դէպի եղելութեան տեղը։ Պօլիցիան անյապաղ փակեց Դաուն-ստրիտ, որտեղ բնակվում է Գլադստոն, որովհետև երկիւղ էին կրում նրա կեանքի դէմ փորձ անելուց։ Ահագին չինութեան մի մասը կատարելապէս աւերված է։ Գրասենեակի մէջ նստած էր գլխաւոր քարտուղարի օգնականներից մէկը. նրան ճայթիւնը բաւական բարձր գցեց։ Մօտակայ տները սաստիկ վնասվեցան։ Ճայթիւնը լսվեցաւ մի քանի մղոն տարածութեան վրա։ Ոչ ոք չը սպանվեցաւ, բայց մի քանի մարդ վիրաւորված են։ Հետախուզութիւններից երեւում է, որ դինամիտի քանակութիւնը բաւական մեծ է եղել։ Նոյն գիշերը փորձ արվեցաւ ճայթեցնել «Times» լրագրի խմբագրութիւնը, բայց պահապանը նկատեց այրվող ֆիտիլը և հանգցրեց։

—«Հաւասի» ընկերութիւնը հաղորդում է, որ Գուլետայի մէջ պատահած անցքի մասին լուրը չափազանցված է։ Մի հարբած իտալացի կամենում էր վիրաւորել գրագրին, բայց պահապանը խնդրեց նրան հեռանալ։ Իտալացին չը կամեցաւ հնազանդվել և նրան տարան ֆրանսիական հիւպատոսի մօտ։ Իտալական փոխ-հիւպատոսը պահանջեց ազատել նրան և իր մօտ տանել։ Այդ պահանջը կատարվեցաւ և դրանով էլ գործը վերջացաւ։ Օրերումս Փարիզի սուրբ Լիւդովիկոսի լիցէյի ուսանողները, որոնց ընկերը արտաքսված էր Ինվալիդների հրապարակի վրա եղած անկարգութիւններին մասնակցելու համար, ապստամբվեցան, պատառոտեցին իրանց դրօշակները, ասպակիները կոտրատեցին և սկսեցին աղաղակել. «մահ Ժիւլլին։» Ժիւլլ լիցէյի կառավարիչներից մէկն է։ Պօլիցիականները դուրս արեցին ուսանողներին ննջարանից, որտեղ նրանք ամրացել էին։ Փողոցային ցոյցերին մասնակցող ուսանողը ուղարկված էր Սեն-Սիրի ուսումնարանը, որ հանրապետական բնաւորութիւն ունի, մինչդեռ լիցէյ օրինական կամ օրլէանական է։

—Անգլիական համայնքների ժողովի մարտի 14-ի նիստին Պարնել առաջարկեց իր բիլլի երկրորդ ընթերցանութիւնը կալուածական ակտի փոփոխութիւնների մասին և յայտնեց, որ իրլանդական կալուածական հարցը չի լուծվի մինչև չընդունվեն նրա օրինագծի մէջ առաջարկած փոփոխութիւնները։ Զապլին առաջարկում է մերժել այդ օրինագիծը։ Գլադստոն նկատում է, որ նա չէ կարող ոչ փոխել կալուածական օրէնքները և ոչ էլ ազատել նրանց հիմունքները։ Նա յոյս ունի, որ խաչակիր մի նոր արշաւանք քարոզող Պարնել կը խոստանայ, թէ նա կը զբաղի օրինական և իսօքի ազատութեան սահմանների մէջ և չի գրգռի նրանց, որոնք կարող են փորձ անել հանդստութիւնը խանգարելու օրէնքներին չը հնազանդվելու համար։ Կառավարութիւնը իր կողմից չէ կարող խոստանալ ոչ մի օրինագիծ առաջարկել և ոչ էլ պաշտպանել մի ուրիշի առաջարկած օրինագիծը այդ առարկայի վերաբերութեամբ։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Ներկայ տարվայ յունվարի սկզբին թէ Պեկինի և թէ առհասարակ հիւսիսային Չինաստանի մէջ սարսափելի երկրաշարժ կար։ Այդ պատճառով կայսր Կուանգ-Ֆու բազմաթիւ սվիտայով ուղեւորվեցաւ վիշապների Աստուծոյ տաճարը դոհ անելու և այդ Աստուծոյ ծառայողներից հարցնելու համար, թէ վիշապների Աստուածը ինչի է բարկացած (չինացիների կարծիքով երկրաշարժը բացառապէս վիշապների Աստուածն է պատճառում։) Աստուծոյ ծառայողները պատասխանեցին, որ վիշապների Աստուածը բարկացած է ոչ թէ կայսրի, այլ նրա աստիճանաւորների վրա, որովհետև նրանք անդադար վերանորոգութիւններ են մտցնում և թոյլ են տալիս երկրի մէջ օտար սովորութիւնների տարածվելը։ Երկու օրից յետոյ Պեկինի պաշտօնական լրագրի մէջ տպվեցաւ կայսերական շրջաբերականը, որով աստիճանաւորներին պատուիրվում է զգոյշ լինել վերանորոգութիւնների իրագործման ժամանակ և նրանց ուժով չը տարածել, որպէս զի Աստուած առիթ չունենայ բարկանալու և կայսերութեան հիմունքները խախտելու համար։

* * *

Ամուսնական երջանկութիւնը, Մահմէդի ճաշակով, «Новости» լրագրի խօսքերով, այնքան քաղցրը չէ իրականութեան մէջ, ինչպէս կարծում են հեռուից վառ երեւակայութիւն ունեցող բանաստեղծները։ Գոնէ իրանք մահմեդականները գանգատվում են բազմակնութեան դէմ։ Երբ եւրոպական մէկ իշխան իր կնոջ և որդու հետ այցելեցին Կ. Պոլիս, սուլթան Աբդուլ-Մէջիդ,—որպէս պատմում է Զայկովսկի,—գցելով սուլթանական բոլոր հին սովորութիւնները, ճաշում էր նրանց հետ մի սեղանի վրա, ամբողջ ժամերով զբօսնում էր նրանց հետ միասին, որպէս եւրոպացի։ Նա անդադար կրկնում էր.—ինչ կայ զարմանալի, որ եւրոպացիք բաւականանում են մէկ ամուսնով, ունենալով այնպիսի ընկերուհիներ, ինչպէս իշխանուհին է։ Եթէ ես այդպիսի կին ունենայի, ես կարձակէի իմ հարեմի հարիւրաւոր գաղանիկներին և հոգով ու սրտով կապվէի այն ժամանակ, իսկ այժմ ես բաւականութիւն եմ գտնում, որպէս ասնասուն։ Մեր հարեմները, և ոչ մի այլ բան, կարել են մեր ճանապարհը և արգելում են մեզ մարդավարի ապրել։ Ոչ սուլթանը, ոչ խալիֆը չեն կարող օգնել այդ ցաւին. նրանց կամքին ընդդիմադրվում է վաղուցվայ սովորութիւնների հին ֆանատիկոսութիւնը։ Շատ և շատ տարիներ կանցնեն, նախ քան թէ մենք կազատվենք այդ չարիքից։ Սուլթանը ակնարկում էր այն հնացած ֆանատիկոսութեան վրա, որով մուսլիմ չունեն սուլթանի հարեմում կրթված և բարեկրթ կանայք։ Աւանդութեամբ, սուլթանը պէտք է սարկուհու որդի լինի, միայն սարկուհին կարող է սուլթանի կին լինել։

* * *

Զայկովսկի վերին աստիճանի ծիծաղելի փաստ է պատմում թիւրքաց դիպլոմատների ազնիւութեան մասին։ Ռենկիաբ-Սկէլէսեան դաշնագիրը վաւերացնելուց յետոյ, Պետերբուրգ ուղեւորվեցաւ մի դեսպանութիւն, որ բաղկացած էր սուլթանի փեսայ Գալիլ-փաշայից, ծովապետ Ֆիրաս-Ահմէդ-փաշայից, և Արիստարխ-բէյից, որը Տրապիզոնի թաղաւորների ցեղից էր։ Նրանք բոլորը, բացի Արիստարխից, ի հարկէ, բարձրագոյն աստիճանաւորներ էին, բայց նրանք ոչ դիպլոմատներ էին և ոչ պետական մարդիկ, այլ միայն դիսմաթի (բաղդի) մարդիկ։ Խօսում էին կարգի բերելու Աբխազիայի կամ Սվանէթայի սահմանները, որոնք իրապէս արդէն անցան Ռուսաստանի տիրապետութեան տակ։ Թիւրքերը կարծես թէ լսում էին երկաթէ գայլի մասին առակը, հասկացողութիւն չունենալով ոչ տօպօդրաֆիայի մասին, ոչ աշխարհագրութեան մասին, ոչ մինչև անգամ Կովկասի մասին, թէպէտ և Գալիլ-փաշան և Ալիբէյն ցեղով չէրքէզներ էին, մէկը աբխազցի էր, իսկ միւսը ուբիխ։ Արիստարխ բերեց Կովկասի քարտէզը և ցոյց տուեց նրա վրա այն տեղերը, որոնց մասին խօսք կար։ Նոյն տեղանի վրա, պատահմամբ թէ դիտմամբ, գրված էր Պետերբուրգի կայսերական այգու յատակագիծը, մեծ մասշտաբով։ Թիւրքերը սկսեցին թղթերով և թելերով չափել երկու յատակագծերի վրա Աբխազիան, Սվանէթիան և կայսերական այգին, չը կասկածելով կամ չը գիտենալով, թէ ինչ է մասշտաբը։ Հետեւեալ օրը առաւօտեան նրանք երեքը միասին գնացին կայսերական այգին և չէրքէզ Ալի-բէյ քայլերով չափեց նրա երկարութիւնը և լայնութիւնը։ Թիւրքերը ծիծաղում էին Ռուսաստանի առաջարկութիւնների վրա, որը պահանջում էր այգու տարածութեան հարիւրերորդ մասից պակաս. տուն վերադառնալով, նրանք ուղարկեցին Արիստարխին յայտնելու, որ համաձայնվում են Ռուսաստանի առաջարկութիւնների հետ, և Ռուսաստանը այդպիսով բաւականութիւն ստացաւ։ Կ. Պոլիս վերադառնալուց յետոյ նրանք պատժվեցան իրանց ագիտութեան համար, բայց զիջումն արել էին և գործը վերջացած էր։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 15 մարտի։ Իշխան Գորչակովի մարմինը կը տեղափոխեն Ռուսաստան մի քանի շաբաթից յետոյ։ Հետեւեալ շաբթին Կոխանովի յանձնաժողովը կը վերջացնի գաւառական վարչութեան տեղական հիմնարկութիւնների մասին կանոնադրութեան քննութիւնը և կանցնի նահանգական կառավարութեան մասին հարցերի մշակութեանը։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 15 մարտի։ Կալանաւորներին ուղեկցելու համար կազմակերպվում են 517 քաղաքներում և էտապային կէտերում եւրոպական Ռուսաստանի 15 ունակս զօրախմբեր և 490 պահապան բաժիններ։

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԹԻՖԼԻՍԻՑ ՀԵՌԱՆԱԼՈՒ պատճառով էժան ծախվում են 5 կտոր գետին, Նաբերեժնայա փողոցի վրա նոր կամուրջի մոտ։ Ցեղեկանալ **ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՄԻՋ։ ՆՈՅՆ** պատճառներով ծախվում են կիսագնով. ՀԱԳՈՒՍՏ, տրիկո, բլդէ ԳՈՒԼԲԱՆԵՐ և այլն։ Նոյն տեղ կայ մեծ քանակութեամբ երկաթէ ԳՐԻԶՆԵՐ, երկաթէ ՄԱՀՃԱԿԱԼՆԵՐ, թէց 1-ն հունձի, չը թրջվող վերարկուներ, ԹԱՄԲԵՐ կանանց և աղամարդկերանց, ՍԱՊՈՆ և այլն 25% աւելի էժան քան թէ ուրիշ տեղ։ Գլիցերինի սապոն ֆունտը 40 կ.։ Հնդկական բրինձ 8 կ. ֆունտը։

2—8

ՆԵՐՍԻՍԵԱՆ ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ-ՀՈԳԵՒՈՐ ԴՊՐԱՆՈՅՈՒՄ հոգաբարձական խորհրդարանի մէջ, մարտ ամսոյս 23-ին, երեկոյեան 8 ժամին, կը լինի ածուրդ (առանց կրկնաձրդի) կապալով տալու թէլէթի սուրբ գէորգայ ուխտատեղւոյ գաւթումը գտնուած մի կրպակ իրա մի սենեակով։ Պայմանաթուղթը կարելի է կարդալ հոգաբարձութեան դիւանատան մէջ ամեն օր, բացի կիւրակից և տօներից, առաւօտեան 10-ից 12 ժամը։

1—3

Տպագրութեամբ լոյս տեսաւ՝

ՈՒՍՈՒՑԻՉ

ՌՈՒՍԱՑ ԼԵԶՈՒԻ

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ

Հայոց ուսումնարանների համար. յօրինեց Զ. ԳՐԻԳՈՐԵԱՆՑ

„Учитель русскаго языка.“

Այս գրքի մէջ կան ռուսերէն գեղագրութեան օրինակներ, երգեր, փոքրիկ և թեթև հատուածներ։

Գինն է 20 կ.—գումարով 16 կ.

Վաճառվում է՝ въ Кавказск. книжн. торговлѣ Зах. Грикурова въ Тифлисѣ.

3—10

ՐԱՖՖԻ

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

ԽԱՉԱԳՈՂԻ

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆԸ

ԱՌԱՋԻՆ և ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍԸ

Գինն է 1 ր. 20 կ.

Վաճառվում է

„Մշակի“ խմբագրատանը,—„կենտրոնական գրավաճառանոցում“— կովկասեան գրավաճառանոցում“—պ. Շահվերդեանի պաւիլիօնում,—պ. պ. Շահինեանցի և Տէր-Յովհէփեանցի ծխախոտի մագազիններում։

Օտարաքաղաքացիք կարող են դիմել այս հասցէով.

Въ ТИФЛИСѢ. Редакція „МШАКЪ“ Меликъ-Акопіану.

ВЪ РЕДАКЦІИ ГАЗЕТЫ „МШАКЪ“ ПРОДАЕТСЯ БРОШЮРА НА РУССКОМЪ ЯЗЫКѢ „ЭКОНОМИЧЕСКОЕ ПОЛОЖЕНІЕ ТУРЕЦКИХЪ АРМЯНЪ.“ Цѣна 25 копѣекъ.

Соч. Григорія аб Грігуръ.

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

Յ. ՆԱԶԱՐԵԱՆՑԻ

„ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒԻ ՈՒՍՈՒՑԻՉ“

Երրորդ տարուայ դասագիրքը

Երկրորդ տպագրութեամբ։

Գինը 40 կոպէկ է։

Գումարով առնողներին զիջումն կը լինի։

Ծախվում է կենտրոնական գրավաճառանոցում։

ԿՕՆԿՈՒՐՍԱՑԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ սնանկ պարտատէր ԳԱՎՐԻԻԼ ՇԱԴԻՆՕՎԻ գործերի վերաբերութեամբ հրաւիրում է ցանկացողներին գնել մասամբ և քանակութեամբ դինովին պատկանող ապրանքների 172 կապոցները, որոնք իրանց տեղը արժեն 47,[illegible] ր., զլխաւորապէս Ս. Պետերբուրգի և Մոսկվայի չրթեր։ Ապրանքները գտնվում են թունով եղբայրների պահեստի մէջ Սագօվայա փողոցի վրա։ Ապրանքները կարելի է նել ամեն օր թուքթունօվների պահեստի մէջ, իսկ պայմանների մասին կարելի է խնդրել իւրաքանչիւր շաբաթ հինգշաբթի և շաբաթ օրեր 6—8 ժամը երեկոյեան, կոնկուրսի բնակարանի մէջ, Իրակլիեվսկայա փողոց, տ. Արտազովի № 8։

կոնկուրսի նախագահ **ՄԵԼԵԳԻ**

3—3

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ ՄԱՄՈՒԼԻ ՏԱԿԻՑ

ՊԱԼԵՍՏԻՆ

ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՁԵՌՆԱՐԿ իբրև օժանդակ սուրբ պատմութեան։

Գրքի վերջը դասնվում է համառօտ ծանօթութիւն սուրբ պատմութեան մէջ յիշված բոլոր երկրների։

ԳԻՆՆ Է **20** ԿՈՊԷԿ

Գումարով կանխիկ առնողներին կը լինի 10—20% զիջումն։

Իմ միւս աշխատասիրութիւնները՝ 1) „Աշխարհագրութիւն Հայաստանի“, 2) „Հայրենագիտութիւն“, 3) „Քարտէզ Հայաստանի“ գտնվում են կովկասեան և կենդրոնական գրավաճառանոցներում։

ԱՒԵՏԻՔ ՏԷՐ ՅԱԿՈՎԲԵԱՆՑ.

ԳԱԼԵՐԵԱ **ԱՐՃՐՈՒՆԻ** ԴՎՈՐՅՈՎԱՑԱ ՓՈՂՈՑ

ՊԱՀԵՍՏ **ԵՒՐՈՊԱԿԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ № 144.**

СКЛАДЪ ЕВРОПЕЙСКИХЪ ТОВАРОВЪ

№ 144, ГАЛЛЕРЕЯ АРЦРУНИ

Ծախվում են. մեծ քանակութեամբ և խիստ էժան, վիէննայի թէնէթ ֆաբրիկայի մէբելի ամեն տեսակ, նոյնպէս ՈՍԿԵԶՕԾ ՇՐՋԱՆԱԿՆԵՐ հայելիների համար և ՀԱՅԵԼԻՆԵՐ, լուսանկարների համար ԱԼԲՈՒՄԻ թուղթ, բէլգիայի ԱՊԱԿԻՆԵՐ պատուհանների համար, ամեն տեսակի, նոյնպէս ՄԱՐՄԱՐԻՕՆ քար, ԹՈՒՋԵԱՑ ԱՄԱՆՆԵՐ հմայլով, ՆԻԹՐԱԹ ԴԱՐԺԱՆ, ՈՍԿԻ և ուրիշ շատ ապրանքներ։

ԿՕՆԿՈՒՐՍԱՑԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ սնանկացած ԳԱՎՐԻԻԼ ՇԱԴԻՆՕՎԻ գործերի վերաբերութեամբ հրաւիրում է վերջինի պարտատէրերին ընդհանուր ժողովի ներկայ մարտ 22-ին, որ լինելու է կոնկուրսի բնակարանի մէջ, Իրակլիեվսկայա փողոցի վրա, Արտազովի տանը № 8, երեկոյեան 6 ժամին կոնկուրսի անդամների վարձատրութեան հարցը վճռելու համար։ կոնկուրսի ՆԱԽԱԳԱՀ **ՄԵԼԵԳԻ**։

3—3

„ՄՇԱԿԻ“ ՀԵՌԱԳԻՐ (ՄԱՐՏԻ 15)

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՍԱ

„ՀԻԻՍԻՍԱՑԻՆ“ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

Մուրհակների կուրսը 3 ամսով Լոնդոնի վրա	$24^{1}/_{16}$ պէնս
» » 3 » Ամստերդամի վրա	»
» » 3 » Համբուրգի վրա	$204^{1}/_{4}$ մարկ
» » 3 » Փարիզի վրա	$251^{3}/_{4}$ ֆրանկ
Ոսկի	8 ր. $23^{1}/_{2}$ կ.
Արծաթ	1 ր. 35 կ.
Մաքսային կուպոններ	8 ր. 20 կ.
Բօրսային դիսկոնտներ	$6^{1}/_{2}$%
Պետական բանկի 5% տոմսակ 1-ին շրջանի	95 ր. 87 կ.
» » » » 2 »	$92^{1}/_{2}$ ր.
» » » » 3 »	92 ր.
» » » » 4 »	92 ր.
» » » » 5 »	91 ր. 87 կ.
Արևելեան 1 փոխառութեան տոմսակը	91 ր. 62 կ.
» 2 » »	91 ր. 62 կ.
» » » »	$91^{3}/_{4}$ ր.
Ներքին 5% 1 փոխառութեան տոմսակը	219 ր.
» » 2 » »	$210^{1}/_{2}$ ր.
$5^{1}/_{2}$% րենտա	99 ր. 50 կ.
Ակցիաներ փոխառու բանկի	452 ր.
» Միջազգային բանկի	$366^{1}/_{2}$ ր.
» Վոլժսկո—Կամսկի բանկի	438 ր.
» Սիբիրի առևտրական բանկի	335 ր.
» Ռուսաց արտաքին առևտրի բանկի	270 ր.
» Ռուսաց կալուածական կրեդիտի կենտրոն. բանկի	»
» Ռուսաց երկաթուղիների գլխաւոր ընկ.	$259^{1}/_{4}$ ր.
» Բիբինսկո-Վոլգովսկի երկաթուղու	61 ր.
» Ս. Պետերբ. կրակի դէմ ապահովութեան ընկ.	»
5% պրաւական թերթեր փոխադ. կալուած. կրեդ. ընկ.	131 ր. 87 կ.
6% » Խարկովի կալուած. բանկի $43^{1}/_{2}$ տարի	$92^{1}/_{2}$ ր.
» » Վիլնօի » » » »	$92^{3}/_{4}$ ր.
» » Պոլտավայի » » » »	92 ր. 12 կ.
» » Մոսկվայի » » » »	97 ր. 12 կ.
» » Բես.—Տաւ. » » » »	$92^{3}/_{4}$ ր.
$5^{1}/_{2}$% » Խերսոնի » » » »	91 ր. 12 կ.
Բօրսային տրամադրութիւնը	Ամուր
Յորեն ռուսաց 10 պուդ	13 ր. 25 կ.
Յորեն սակաոնկա » »	13 ր. 50 կ.
Յորեն	Հանդարտ
Հաճար 9 պուդ	$8^{3}/_{4}$ ր.
Հաճար	Հանդարտ
Վարսակ 6 պուդ	4 ր. 70 կ.
Վարսակ	Թոյլ
Գարի 8 պուդ	8 ր. 45 կ.
Վուշի սերմ 9 պուդ	14 ր.
Հաճարի ալիւր 9 պուդ	9 ր. 50 կ.
Ալիւրը	Հանդարտ
Կանեփ Ռժեվի	41 ր.
» սովորական	34 ր.
» ընտիր	42 ր.
Թել Սիբիրի	42 ր.
» Կամայի	41 ր.
Վուշ	Հանդարտ
Կանեփ	Թոյլ
Կրուպչատկա Սարատովի 5 պուդ	13 ր.
» Նիժեգորոդեան 5 պուդ	$12^{3}/_{4}$ ր.
Լիվերպուլի ձէթ քաղցր	$8^{3}/_{4}$ ր.
Կերոսին ամերիկական	2 ր. 35 կ.
» ռուսաց	1 ր. 40 կ.
Ձէթ	$10^{1}/_{4}$ ր.
Ճրագու դեղին մոմի համար 2 անգամ հալուած 1 տեսակ	75 ր.
» սապոնի	73 ր.
Խէժ ֆինլանդական	»
Կովի իւղ Սիբիրի	9 ր. 80 կ.
Պղինձ կտորներով պուդը	»
» թերթերով »	»
Երկաթ թերթերով պուդը	»
Կովի կաշի չոր, պուդը	$14^{1}/_{2}$ ր.
» » Ամերիկական »	$5^{1}/_{2}$ ր.
Սպիրտ 40% վեդրոն	» 75 կ.
Շաքար բաֆինադ 1 տեսակ պուդը	8 ր. 80 կ.
» » 2 » »	»
Շաքարաւազ	8 ր. 10 կ.
Պոտաշ բերիովից	28 ր.

Дозволено цензурою, Тифлисъ, 16 Марта 1883 года.

Типогр. Главн. Упр. Главнонач. гражд. час., Лор.-Мелик. ул. каз. д.